Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք

# ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԽՀ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՄՇԱԿԵԼՈՒ, ՔՆՆԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ՀԱՄ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ)

ՍԱԽԵԼԳԱՄԻ
Գյուղատնտեսական սեկտոր
1935 թ.

338.14
Վ-94

17 FEB 2010

Арм.
2-5638а
338.14
Վ-94

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք*

# ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԽՀ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ ՄՇԱԿԵԼՈՒ, ՔՆՆԵԼՈՒ ՅԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՅԵՎ ՀԱՄ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ)

Инв. № 14870

*ՍԱԽԵԼԳԱՄԻ*

*Գյուղատնտեսական սեկտոր*

*1935 թ.*

12 AUG 2013

30795

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

40014-63

Խմբագիր՝ Վ. ԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Գ. ԲԱԲՈՒՐՅԱՆ
Հանձնված է տպագր. 25/V 1935 թ.
Ստորագր. տպելու 7/VI 35 թ.
Թղթի չափը 72×105
Շարվածքի չափը 5×8
Գրաւեպ. № ծ-2008
Պատվեր № 428
Տիրաժ 10,000

3-я тип. Сахелгами. Тифлис, ул. Церетели, № 3/5.

Պետհրատի 3-րդ տպ., Ծերեթելու փող. № 3/5

# I

## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԾԽԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Նկատի ունենալով, որ Արևմտյան Վրաստանի շրջանների մեծ մասում կոլխոզային ծխերի զգալի մասը՝ խուտորային տիպի բնակություն հաստատելու շնորհիվ, անձնական օգտագործման համար ունի 1 հեկտ. և ավելի չափով տնամերձ հողեր և հաշվի առնելով, որ այդ հողերում աճեցնում են գլխավորապես բազմամյա մշակույթներ (ցիտրուսներ, պտղատու ծառեր, մանր կաղին, խաղողի այգիներ և այլն), անհրաժեշտ համարել կոլխոզային ծխի անձնական օգտագործման համար տրվող տնամերձ հողի չափը սահմանել 0,25—1 հեկտար հետևյալ շրջաններում. Գագրայի, Գուդաուտի, Սուխումի, Կոդորի, Գալիի, Զուգդիդիի, Խոբիի, Ծալենջիխի, Չխորոծկույի, Սենակի, Աբաշայի, Մարթվիլի, Սամտրեդիի, Խոնիի, Լանչխութի, Վանիի, Քութայիսի, Մախարաձեյի, Չոխատաուրիի, Փոթիի, Գորու, Խաշուրիի և Կասպիի։

2. Կոլխոզային ծխին անձնական օգտագործման համար տրվող տնամերձ հողի չափը սահմանել 0,25—0,75 հեկտար հետևյալ շրջաններում. Ստալինիրի (Հարավ-Օսեթիա), Ծիաթուրայի, Բաղդադի, Տղվիբուլի, Չիարի, Քոբուլեթի, Բաթումի, Քեդիի, Խուլոյի, Չես-

տափոնի, Խարագաուլի, Ցուլուկիձեյի, Ոնիի, Ծագերի, Գուրջաանիի, Բորչալվի, Լյուքսեմբուրգի, Սղնախի, Թելավի, Ղվարելի, Լագոդեխի, Թիֆլիսի, Ախալցխայի, Ղարայազի, Ծալկայի, Դուշեթի, Աղբուլաղի, Սագարեջոյի, Բաշկիչեթի, Թիոնեթի, Բոգդանովկայի, Ախալքալաքի, Ադիգենի, Ասպինձայի, Զնաուրի և Լենինգորի ու Բորժոմի շրջանների հարթավայրը։

3. Շրջանների առաջին խմբում մի հեկտարից ավելի, յերկրորդ խմբում—0,75 հեկտարից ավելի և յերրորդ խմբում — 0,5 հեկտարից ավելի տնամերձ տեղամասեր ունեցող կոլխոզային ծխերում այդ նորմաներից ավելորդը պետք է կտրվի, այն էլ միայն աշնանը, բերքահավաքից հետո։

Բոլոր կոլխոզային ծխերը, վորոնք ունեն մինչև 0,25 հեկտար տնամերձ հողամասեր, իրավունք ունեն ստանալ 0,25 հեկտար ավելորդ հող այն տնտեսություններից, վորոնց հողերն ամենաբարձր չափից ավելի յեն, ինչպես և գյուղում յեղած ու ներկայումս չոգտագործվող տնամերձ հողերի հաշվին։

Սահմանել, վոր միանգամայն թույլ չի տրվում՝ կոլխոզային ծխերին տնամերձ հողեր տրամադրել խաղողի ու մրգատու համայնացված այգիներից և ուրիշ բազմամյա տնկարաններից։

4. Բացատրել, վոր տնամերձ հողերի վերջնական չափերի մեջ են մտնում բանջարանոցները, բազմամյա տնկիները, վորպիսին են պտղատու այգիները, ցիտրուսները, խաղողի այգիները, ինչպես նաև յեղեգնի տարածությունները, վորոնք տալիս են շենքերը ծածկելու նյութ («սախլե»), տնամերձ փոքրիկ անտառը և չմշակվող կանաչարակը (կոինդարի), չհաշվելով բնակարանների համար տրամադրված հողերը։



II

## ՀՈՂԻՑ ՄՇՏԱՊԵՍ ՈԳՏՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Առաջարկել Վրաստանի Հողժողկոմատին, վորպեսզի քարտեզներում նշվեն կոլխոզների՝ հողից ոգտվելու սահմանները և կոլխոզներին տրված լինեն պետական արձանագրություններ՝ 1935 թ. ընթացքում հողից մշտապես ոգտվելու մասին այն շրջաններում, ուր կոլեկտիվացումով ընդգրկված են 50 տոկոսից ավելին, այսինքն՝ Խաշուրիի, Գորու, Սղնախի, Լագոդեխի, Ղարայազի, Բորչալվի, Քութայիսի, Սամտրեդիի, Վանիի, Աբաշայի, Սենակիի, Մարթվիլի, Զուգդիդիի, Մախարաձեյի և Լանչխութի շրջաններում։ Մնացած շրջաններում կոլխոզների հողից ոգտվելու սահմանները քարտեզներում նշելու և հողից մշտապես ոգտվելու մասին պետական արձանագրությունները կոլխոզներին տալու աշխատանքներն ավարտել 1936 թվի ընթացքում։

2. Պարտավորեցնել Վրաստանի Հողժողկոմատին՝

ա) սահմանել հողաշինարարության աշխատանքների որացուցային ժամկետներ ամեն մի առանձին շրջանում.

բ) կոլխոզային հողերի սահմանները քարտեզներում նշելու աշխատանքների կատարման համար շրջան-

ներին և կոլխոզներին օգնելու նպատակով՝ ուղարկել, բացի շրջաններում մշտական աշխատանքի մեջ գտնվող 60 հողաշինարարից, լրացուցիչ կերպով 150 մարդ, վորոնցից 75 հոգու — Վրաստանի Հողժողկոմատի սիստեմից, 20 հոգու — հողաշինարական տեխնիկումից և 55 հողաշինարար զանազան կազմակերպություններից մոբիլիզացիայի յենթարկելու կարգով.

գ) շրջաններում կազմակերպել կարճատև դասընթացներ՝ կոլխոզնիկներից 7.000 հողաշինարար տեխնիկ պատրաստելու համար.

դ) ստուգել բոլոր սովխոզներում հողից օգտվելու ձևը և արդեն 1935 թ. սովխոզների հողերից կոլխոզներին տրված 8.000 հեկտարին զուգընթաց, լրացուցիչ կերպով յերևան հանել բացահայտորեն ավելցուկ հողերը, վոր չեն կարող յուրացնել սովխոզները, և տալ կոլխոզներին։

Միաժամանակ սահմանել, վոր տեղական շրջանային նշանակություն ունեցող սովխոզներից (տեղական մարմինների, կոոպերատիվային կազմակերպությունների՝ միլիցիայի, գործկոմների տնօրինության տակ գտնվողներից) ավելցուկ հողերը կտրելու հարցը լուծում են շրջկոմները և շրջանային գործկոմները։

Իսկ տրեստի վերածված սովխոզների ավելցուկ հողերը կտրելու հարցը վերջնականապես լուծում են Վրաստանի Ժողկոմխորհը և Կ (բ) Կ Կենտկոմը՝ հանրապետական սովխոզների վերաբերյալ, իսկ համամիութենական մարմիններին անմիջականորեն յենթակա սովխոզների վերաբերյալ (Թեյի, կիտրոնի — մանդարինի սովխոզներ և այլն) — համաձայնեցնել համամիութենական համապատասխան մարմինների հետ.



յե) կոլխոզների հողերի սահմանները քարտեզներում նշելու աշխատանքների կատարման պրոցեսում յերևան հանել այն մենատնտեսների հողերի ավելցուկը, վորոնք չեն յուրացնում այդ ավելորդ հողերը, և հանձնել կոլխոզներին. կոլխոզներին հանձնել նմանապես այն անձանց օգտագործման մեջ գտնվող բոլոր հողերը, վորոնք վերջին 2 տարվա ընթացքում խզել են իրենց կապը գյուղատնտեսությունից և այդ հողերը մշակում են վարձու աշխատանքով։

3. Արևելյան Վրաստանի շրջանների կոլխոզների գյուղերի սահմանները քարտեզներում նշելու աշխատանքների կատարման ժամանակ վերացնել հողերի շերտ առ շերտ ընկած և բազմահողամասային վիճակը, թույլ տալով, սակայն, առանձնացնել կոլխոզային հողերը մի քանի զանգվածների ձևով այն դեպքում, յերբ դա պայմանավորված է հենց կոլխոզի տնտեսական պահանջներով (ջրովի և անջրդի հողեր, ռելյեֆի պայմանները — անտառ, լեռ, գետակ և այլն)։

4. Իբրև բացառություն, Արևմտյան Վրաստանի շրջաններում կոլխոզների հողից օգտվելու գործում թույլ տալ բազմահողամասային դրություն, յերբ դա իրոք պահանջում է բնակեցման խուտորային տիպը։

5. Բացատրել հողային մարմիններին, մարզային ու շրջանային կուսկազմակերպություններին, վոր թույլ չի տրվում բազմամյա տնկիները՝ (խաղողի և պտղատու այգիներ) մենատնտեսների ու կոլխոզնիկների հետ փոխանակելու միջոցով վերածել միանական զանգվածների։

III

## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԾԽԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

*Գյուղատնտեսական արտելի Որինակելի կանոնադրության 5-րդ կետի համապատասխան՝*

*1. Շրջանների առաջին խմբում, որի մեջ ամեն մի կոլխոզային ծուխ անձնական ոգտագործման համար կարող է ունենալ մի կով կամ մի մատակ, մինչև 2 գլուխ յեղջյուրավոր մատղաշ անասուն, մի մերուն խոզ՝ խոճկորներով կամ յեթե կոլխոզի վարչությունն անհրաժեշտ համարի—2 մերուն խոզ՝ խոճկորներով, մինչև 10 ոչխար ու այծ՝ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուններ ու ճագարներ և մինչև 20 փեթակ, դասել հետևյալ շրջանները.*

*Խաշուրի — (առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Գորու—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Կասպիի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Գուրջաանիի—(առանց Իորա-Մուղանլինի գյուղխորհրդի)*

*Թելավի—(առանց թուշական և լեռնային անասնաբուծական գյուղերի)*



*Ղվարելի—(առանց լեզգիների գյուղերի)*

*Լագոդեխի—(առանց Կաբալի և Փոխսի գյուղխորհուրդների)*

*Թիֆլիսի — (առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Սագարեջոյի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Քութայիսի*

*Սամտրեդիի*

*Խոնիի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Վանիի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Բաղդադի—(առանց Ջեկարի լեռնանցքի մոտ գտնվող գյուղերի)*

*Զեստաֆոնի*

*Չխարի*

*Ճիաթուրայի*

*Խարագաուլի*

*Տղվիբուլիի*

*Ամբրոլաուրի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)*

*Մախարաձեյի*

*Լանչխութի*

*Ջոխատաուրի—(առանց լեռնային անասնաբուծական գյուղերի)։*

*Այդ շրջանների կոլխոզային ծխերին թույլատրել ունենալ անձնական ոգտագործման համար լրացուցիչ կերպով մի ձի կամ յերկու ավանակ կամ յերկու ջորի։*

*2. Շրջանների յերկրորդ խմբում, ուր ամեն մի կոլխոզային ծուխ անձնական ոգտագործման համար կա-*

րող է ունենալ յերկու-յերեք կով կամ մատակ, բացի դրանից մատղաշներ, 2-3 մերուն խոզ՝ խոճկորներով, 20-25 վոչխար ու այծ՝ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուններ ու ճագարներ և մինչև 20 փեթակ, դասել զարգացած անասնաբուծություն ունեցող հետեվյալ շրջաններն ու գյուղերը.

Ախալքալաքի

Բոգդանովկայի

Սղնախի

Բորչալվի

Ղարայազի

Լյուքսեմբուրգի

Ազբուլախ-Մանգլիսի շրջանի հարթավայրը

Աբաշայի

Ծաղերիի

Սենակիի

Մարթվիլիի

Զուգդիդիի

Խ ո բ ի ի

Լագոդեխի շրջանի Կաբալիի և Փոխսիի գյուղխորհուրդները.

Աբխազիայի ինքնավար ՍԽՀ շրջանները.

Խաշուրի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Կասպիի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Գորու շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Թիֆլիսի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Սագարեջոյի շրջանի անասնաբուծական գյուղերը.



Վանիի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Խոնիի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Ամբրոլաուրիի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը.

Գուրջաանիի շրջանի Իորա-Մուղանլինի գյուղխորհուրդը.

Չխորոծկույի

Ծալենջիխի

Փոթիի

Բաղդադի շրջանի՝ Զեկարի լեռնանցքի մոտ գտնվող գյուղերը,

Չոխատաուրիի շրջանի լեռնային անասնաբուծական գյուղերը,

Աջարստանի ինքնավար ՍԽՀ Բաթումի, Քոբուլեթի և Քեդիի շրջանները: Այդ շրջանների կոլխոզային ծխերին թույլատրել ունենալ անձնական օգտագործման համար լրացուցիչ մի ձի ու մի ավանակ կամ մի ձի ու մի ջորի:

3. Շրջանների յերրորդ խմբում, ուր ամեն մի կոլխոզային ծուխ անձնական օգտագործման համար կարող է ունենալ 4-5 կով կամ մատակ և բացի դրանից, մատղաշներ, 30-40 վոչխար ու այծ՝ միասին, 2-3 մերուն խոզ՝ խոճկորներով, անսահմանափակ քանակությամբ թռչուններ ու ճագարներ և մինչև 20 փեթակ, դասել հետևյալ շրջանները՝

Բորժոմի,

Թելավի շրջանի թուշական գյուղերն ու լեռնային մասը,

Դուշեթի,

Ղվարելի շրջանի լեզգինների գյուղերը,
Թիոնեթի,
Կազբեկի,
Հարավ-Ոսեթիա,
Զոլուրի,
Վերին Սվանեթիայի,
Աջարստանի ինքնավար ՍԽՀ Խուլոյի շրջանը, ինչպես նաև Խիմշիլ և քյուրդ քոչվորներին,
Ադիգենի,
Ո ն ի ի,
Բաշկիչեթի՝ Ծալկայի հետ միասին Աղբուլախ-Մանգլիսի լեռնային մասը,
Ախալցխայի,
Ասպինձայի։

Այդ շրջանների կոլխոզային ծխերին թույլատրել ունենալ անձնական օգտագործման համար լրացուցիչ մի ձի ու յերկու ավանակ, կամ մի ձի ու յերկու ջորի։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Դուշեթի, Կազբեկի և Թիոնեթի շրջաններում, Թելավի շրջանի թուշական գյուղերում, ինչպես նաև Աջարստանի ինքնավար ՍԽՀ Խիմշիլ քոչվորներին թույլ տալ, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզային ծուխ անձնական օգտագործման համար ունենա մինչև 80 գլուխ վոչխար ու այծ՝ միասին։



# IV

## ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ԳԼԽԻ 6-ՐԴ ԿԵՏՈՒՄ

Հանձնարարել գյուղատնտեսական արտելներին՝ լրացուցիչ կերպով մտցնել կանոնադրության մեջ, նկատի ունենալով տեղական առանձնահատկությունները, մի կետ, վորի համաձայն արտելը և վարչությունը պարտավորվում են հիմնել թեյի տնկարաններ, ցիտրուսային ու պտղատու այգիներ, խաղողի այգիներ, դափնու, ռամիի, տունգի ե այլ բազմամյա բույսերի տնկարաններ, մաքրել դաշտերը յեգիպտացորենի կոթերից, ժամանակին և խնամքով կատարել թեյի տնկարանների, ցիտրուսային ու պտղատու այգիների, խաղողի այգիների և այլ բույսերի, ինչպես նաև ծխախոտի, բախչաների, բանջարանոցների, կարտոֆիլի շարքամեջ մշակումը, ժամանակին բժշկել թեյը, ցիտրուսները և այլն, պահպանել ու մաքրել վոռոգող կառուցվածքները, աճեցնել ու ընտրել բազմամյա մշակույթների լավագույն ծառեր՝ տնկելու համար, պատրաստել պատվաստողներ, ցնցուղողներ, վոռոգողներ և մելիորատորներ, գյուղական փողոցներում տնկել թթի, եվկալիպտի, տունգի, դափնու, կաղնու և այլ պտղատու ծառեր ու դեկորատիվ բույսեր, աջակցել արտելի անդամներին՝ տնամերձ հողերում աճեցնելու արժեքավոր բազմամյա մշակույթներ, ինչպիսին են՝ ցիտրուսային, տունգային, եվկալիպտների, պտղատու, թթի ու կաղնու ծառեր։

V

## ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Պարտավորեցնել մարզային ու շրջանային կուսկազմակերպություններին, խորհրդային ու հողային մարմիններին՝ հետևել, որպեսզի Վրաստանի կոլխոզները իրենց կանոնադրությունները ուշադրությամբ մշակեն, քննեն և ընդունեն գյուղատնտեսական արտելի Օրինակելի կանոնադրության հիման վրա։ Դրան համապատասխան, շրջանի ղեկավար աշխատողներին ուղարկել տեղերը՝ օգնելու կոլխոզների վարչություններին։

Կանոնադրության քննությունը, ինչպես նաև նրանում փոփոխություններ և լրացումներ մտցնելու գործը կազմակերպել այնպես, որպեսզի առանց մանրագնին բացատրության չմնա և ոչ մի հարց, որ ծագում է կանոնադրության քննարկման ու ընդունման պրոցեսում։

Բացատրել մարզկոմներին և կենտգործկոմներին, շրջկոմներին և շրջանային գործկոմներին, որ կոլխոզների ընդունած կանոնադրությունների ցուցակագրությունը տեխնիկական աշխատանք չէ և որ անհրաժեշտ է, վերջնական ցուցակագրման համար, ուշադիր քննել ամեն մի առանձին կոլխոզի կանոնադրությունը շրջկոմի բյուրոյի և շրջգործկոմի նախագահության միացյալ նիստում, թույլ չտալով ցուցակագրել այն կանոնա-



դրությունները, որոնք հակասում են Համ. Կ (բ) Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից հաստատված գյուղատնտեսական արտելի Օրինակելի կանոնադրությանը, ինչպես օրինակ նախատեսում են տնամերձ հողի չափազանց ցած կամ չափազանց բարձր չափ, անձնական անասունների չափը և այլն։

2. Առաջարկել բոլոր մարզկոմներին և կենտգործկոմներին, շրջկոմներին և շրջգործկոմներին իրենց անմիջական ղեկավարության տակ վերցնել կոլխոզների հողաշինարարության, կոլխոզային հողերի սահմանները քարտերում նշելու, հողից մշտապես օգտվելու մասին պետական արձանագրությունները կոլխոզներին հանձնելու և կոլխոզային ծխերին տնամերձ հողեր տրամադրելու ամբողջ աշխատանքը։

Վրաստանի Ժողկոմխորհի և Կոմկուսի (բ) Կ Կ այս որոշման մեջ նախատեսված բոլոր միջոցառումները ճշտորեն ու ժամանակին գործադրելու ամբողջ պատասխանատվությունը դրվում է անձնապես մարզկոմների քարտուղարների, կենտգործկոմների նախագահների, շրջգործկոմների քարտուղարների և շրջգործկոմների նախագահների վրա։

3. Պարտավորեցնել շրջգործկոմներին՝ սահմանելու «Կանոնադրությունների ցուցակագրման շրջանային մատյան»։ Սահմանել, որ կանոնադրությունը ցուցակագրելու մասին բնագրի վրա մակագրում են շրջգործկոմի նախագահը և շրջանային հողային բաժնի վարիչը։

Վրաստանի ՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Գ. ՄԳԱԼՈԲԼԻՇՎԻԼԻ

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար՝ Լ. ԲԵՐԻԱ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ [illegible] ՀԱՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ [illegible]

Г. 1985
Акт № 132
Вкладн. л.

ՀՀ Ազգային գրադարան
NL0220082

Գինը 20 կոպ.

30. 795

5

490

Арм.
2-5638а

# ПОСТАНОВЛЕНИЕ

## СНК и ЦК КП (б) Грузии

о мероприятиях по выработке, обсуждению и принятию колхозами уставов Сельскохозяйственной Артели по ССР Грузии

[Одобренное НКЗ СССР и С.-Х. Отделом ЦК ВКП (б)]

ИЗДАНИЕ ГИЗ ГРУЗИИ

СЕЛЬСКО-ХОЗЯЙСТВЕННЫЙ СЕКТОР

ТИФЛИС — 1935